

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ
ԵՊՏՅ ասպիրանտ

Բանալի բառեր՝ ինովացիա, ինովացիոն քաղաքականություն, պետական
աջակցություն

Վերջին երկու տասնամյակում մեծացել է գիտելիքի կարևորությունը տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում: Գիտելիքահենք տնտեսության մրցունակության հիմքում ընկած է ինովացիան, որը գիտելիքի արդյունավետ կիրառման արտահայտությունն է, երբ հավելյալ տնտեսական արժեքը ստացվում է գիտելիքը նոր արտադրանքի, գործընթացների և ծառայությունների փոխակերպելու ճանապարհով: Հետևաբար, ինովացիոն գործունեության խթանումը առանձնակի կարևորություն ունեցող խնդիր է պետության համար՝ պայմանավորված գիտատեխնոլոգիական և ինովացիոն ներուժի նպատակային զարգացմամբ ու արդյունավետ օգտագործմամբ:

Այսպիսով ներկայումս գիտելիքահենք տնտեսության զարգացման աստիճան է բնութագրում պետությունների դինամիկ զարգացման ու բնակչության կյանքի որակը: Գիտելիքահենք արդյունաբերության զարգացման և գիտատեխնիկական առաջընթացի գործոնները դարձել են տնտեսական աճի և բնակչության կյանքի որակի գլխավոր բնութագրերը:

Շուկայական տնտեսության անցման ժամանակահատվածում պետությունը հանդես է գալիս որպես տնտեսական զարգացման ինովացիոն մոդելի գլխավոր հեղինակը, ինովացիոն զարգացման պայմաններ հիմնական ստեղծողը՝ ինքնակարգավորիչ մեխանիզմների և արդյունավետ ինովացիոն ինստիտուտների միջավայրերի ձևավորողը: Այդ գործընթացում առաջնահերթ խնդիր է համարվում պետության կողմից ձեռնարկատիրության և ինովացիոն գործունեության համար ապահովել միջավայր և զարգացման պայմաններ, որոնք նպաստում են ինովացիոն արտադրությունների ռիսկերի նվազմանը, մասնավոր և օտարերկրյա կապիտալի ներգրավմանը:

Ինովացիոն աջակցության պետության գործառույթներ են՝

- Գիտության խթանում, ինովացիոն ձեռնարկատիրության պատրաստումը,
- Ծրագրերի ստեղծումը արտադրության ոլորտում ինովացիոն ակտիվության բարձրացման նպատակով,
- ԳՏԱ-ի նկատմամբ պատվերների ձևավորումը՝ ինովացիաների նկատմամբ ապահովելով նախնական պահանջարկ, որոնք հետագայում տարածում են ստանում տնտեսությունում,

- Պետական կարգավորման հարկային և այլ գործիքների ներդրումը ինովացիաների խթանման նպատակով,
- համալսարանների, գիտության կազմակերպությունների միջև միջնորդությունը՝ խթանելով համագործակցություն ԳՏԱ-ի ոլորտում¹:

Պետությունը պետք է ունենա մասնագիտացված ինովացիոն ենթակառուցվածք, այսինքն՝ հատուկ մասնագիտացված կազմակերպությունների համակարգ, որպեսզի հնարավոր լինի կրթությունն ու գիտությունը ինտեգրել արտադրության հետ:

Ինովացիոն գործունեության իրավական կարգավորումը

Ինովացիոն գործունեության պետական կարգավորումը հիմնվում է գերակայությունների, ռազմավարական հիմնական ուղղությունների ընտրության, ինչպես նաև գիտատեխնիկական ու սոցիալ-տնտեսական զարգացման կողմնորոշումների վրա:

Ինովացիոն գործունեության հաջողության էական բաղադրիչն է ինովացիոն միջավայրի ձևավորման պետական քաղաքականությունը, որն իրականացվում է ինովացիոն գործունեությունը կարգավորող իրավական դաշտի՝ օրենսդրական և նորմատիվային-իրավական մեխանիզմների ստեղծման ճանապարհով:

Ինովացիոն գործունեության իրավական դաշտի ձևավորումը պարտադիր և կարևոր նախապայման է առկա բարձր ռիսկերի դեպքում ինովացիոն սուբյեկտների գործունեության խթանման՝ տնտեսական արդյունավետ պայմանների ապահովման համար:

Հայաստանի անկախացումից հետո աշխատանքներ տարվեցին մտավոր սեփականության ոլորտը կարգավորող պետական լիազորված մարմնի կազմավորման և իրավական դաշտի ստեղծման ուղղությամբ: 1992թ. հունվարին ստեղծվեց ՀՀ կառավարությանը առընթեր արտոնագրային վարչությունը՝ Հայարտոնագիրը, 1993թ. դեկտեմբերին Հեղինակային իրավունքի ազգային գործակալությունը: Հետագայում, 2002թ. մարտին այս երկու մարմինների միաձուլմամբ ստեղծվեց Մտավոր սեփականության գործակալությունը, որն ունի Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում գործող առանձնացված ստորաբաժանման կարգավիճակ:

¹ Жариков, В.В. Ж-345 Управление инновационными процессами : учебное пособие / В.В. Жариков, И.А. Жариков, В.Г. Однолько, А.И. Евсейчев. – Тамбов : Изд-во Тамб. гос. техн. унта, 2009. –180 с.

Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականից հանդիսանում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) և 1995 թվականից Եվրասիական արտոնագրային կազմակերպության (EAPO) անդամ: Գործակալությունը համագործակցում է Եվրոպական արտոնագրային կազմակերպության (EPO), միջազգային, տարածաշրջանային այլ կառույցների և օտարերկրյա պետությունների գերատեսչությունների հետ:

Արտոնագրային իրավունքի մասին շատ օրենքներ հիմնված են արտոնագրային իրավունքի վերաբերյալ միջազգային համաձայնագրերին: Սա նշանակում է, որ երբ պետությունը ստորագրում է որևէ միջազգային համաձայնագիր, դրանով իսկ պարտավորվում է կատարել այդ համաձայնագրի դրույթները: Շատ երկրներ, այդ թվում նաև զարգացող երկրները, թերևս պարտավորված են միանալ այս երկու հիմնական համաձայնագրերին.

- 2013թ. հուլիսի դրությամբ 166 երկիր միացել է Բեռնի կոնվենցիային, որը արտոնագրային իրավունքի մասին միջազգային օրենքի հիմքն է;

- 155 երկիր միացել է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ): Յուրաքանչյուր նոր դրույթ համաձայնագրի մեջ որոշակիորեն նշանակում է արտոնագրային իրավունքի ազգային օրենքի փոփոխություն: Սա նշանակում է, որ շատ երկրներ, հատկապես զարգացող կամ անցումային շրջանի երկրները, գտնվում են արտոնագրային իրավունքի մասին ազգային օրենքի մեջ փոփոխություններ կատարելու փուլում: Միջազգային համաձայնագրերը ինչ-որ չափով ճկուն են, որը տարբեր իրավական համակարգ ունեցող երկրներին հնարավորություն է տալիս կիրառել այդ համաձայնագրերի դրույթները ²:


Մտավոր սեփականությունը բաժանվում է երկու հիմնական ոլորտի՝ արդյունաբերական սեփականություն, որ ներառում է գյուտերը, ապրանքային նշանները, արդյունաբերական նմուշները և աշխարհագրական նշումները:

Հեղինակային իրավունք, որ ներառում է գրական ստեղծագործությունները՝ վեպերը, պոեմներն ու դրամաները, ֆիլմերը, երաժշտական ստեղծագործությունները, արվեստի ստեղծագործությունները՝ գծանկարները, նկարները, լուսանկարներն ու քանդակները, ինչպես նաև ճարտարապետական ստեղծագործությունները:

² <http://www.aipa.am/hy/about-us>

Ըստ վիճակագրության (Գծապատկեր 5) 2013թ. 33 էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 132 գյուտի և 40 օգտակար մոդելի հայտ, որոնցից 165-ը՝ ազգային, 7-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Գործակալության գործունեության ընթացքում՝ 1992թ-ից մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 3 851: 2013թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը 2012թ. համեմատ նվազել է 10-ով: 2013թ. ազգային հայտատուների կողմից ներկայացվել են գյուտերի 5 միջազգային հայտեր: 1994-2013թթ. ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել 76 գյուտի հայտ: Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2013թ. ներկայացվել է 4 հայտ: 2013թ. գործավարությունն ավարտվել է 136 հայտով, ընդ որում, 66 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 28 հայտով՝ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին, 22 հայտով՝ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին, 18 գյուտի (օգտակար մոդելի) հայտով՝ արտոնագիր տալն անբողջությամբ մերժելու մասին, 2 հայտով նախապատրաստվել է գյուտի արտոնագրաունակության մասին եզրակացություն:


Հայաստանի Հանրապետության “Մտավոր սեփականության” վիճակագրություն



Գծապատկեր 5. Գյուտերի ներկայացման հայտեր


- ազգային հայտատուների
- օտարերկրյա հայտատուների
- այդ թվում՝ PCT ընթացակարգով

Տրվել են արտոնագրեր



Գծապատկեր 6. Արտոնագիր ստացած գյուտեր


- ազգային հայտատուների
- օտարերկրյա հայտատուների
- այդ թվում՝ PCT ընթացակարգով



Գծապատկեր 7. Օգտակար մոդելների ներկայացման հայտեր

- ազգային հայտատուների կողմից
- օտարերկրյա հայտատուների կողմից
- այդ թվում՝ PCT ընթացակարգով

Տրվել են արտոնագրեր



Գծապատկեր 8. Արտոնագիր ստացած օգտակար մոդելներ³

- ազգային հայտատուներից
- օտարերկրյա հայտատուներից

Patent Cooperation Treaty (PCT)՝ միջազգային համաձայնագիր արտոնագրային իրավունքի ոլորտում, որը կնքվել է 1970 թվականին: Այն տրամադրում է արտոնագրային հայտերի ներկայացման միասնական կարգ, որի նպատակը ինովացիաների պաշտպանությունն է: PCT-ի ներքո ներկայացվող արտոնագրային հայտերը կոչվում են միջազգային կամ PCT հայտեր⁴:

Ինովացիան չափազանց կարևոր է տնտեսությունը ձևավորելու գործընթացում և կենսական նշանակություն ունի Հայաստանի համար, որը չունի բնական ռեսուրսների մեծ պաշար, չունի ելք դեպի ծով, իսկ տրանսպորտային ծախսերը մեծ են:

Ինովացիոն գործունեության պետական կարգավորման առումով որոշակի քայլեր արվեցին 2005 թ.-ից՝ մասնավորապես “ՀՀ կառավարության որոշումը ՀՀ Ինովացիոն համակարգի ձևավորման 2005-2010 թթ. Ծրագրի մասին” 28 սեպտեմբերի 2005 թվականի N 1729-Ն որոշումը⁵, 2011 թ. փետրվարի 17-ի ՀՀ կառավարության մշակած ինովացիոն գործունեության

³ <http://www.aipa.am/hy/about-us>
⁴ <http://www.wipo.int/pct/en>
⁵ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21361>

հայեցակարգը⁶ և “Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին” 2006թ. մայիսի 23-ի ՀՀ օրենքը⁷:

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման և իրականացման իրավական և տնտեսական հիմքերը, ինովացիոն գործունեությանը պետական աջակցության ձևերը: Նույն օրենքի հոդված 6–ում ամրագրվում են է պետական աջակցության նպատակը և խնդիրները, որոնք են.

1. Պետական ինովացիոն քաղաքականության նպատակն է ինովացիոն գործունեության համար տնտեսական, իրավական և կազմակերպական պայմանների ապահովումը:

2. Պետական ինովացիոն քաղաքականության խնդիրներն են՝

- ա) պետական ինովացիոն քաղաքականության գերակայությունների սահմանումը,
- բ) տնտեսության տեխնոլոգիական վերազինմանը և ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը,
- գ) ինովացիոն գործունեության ոլորտում գիտության, կրթության, արտադրության և ֆինանսավարկային կառույցների համագործակցության իրավական հիմքերի ստեղծումը:

Իսկ ըստ “Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի “բ” կետի և ՀՀ կառավարության որոշման համաձայն ՀՀ-ում հաստատվում են ինովացիոն ոլորտի զարգացման հետևյալ գերակայությունները՝

- Ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը,
- Էներգիայի այլընտրանքային աղբյուրները,
- Բարձր տեխնոլոգիական մշակումները,
- Էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը⁸

Ընդ որում ըստ այդ նույն օրենքի սահմանման ինովացիոն ենթակառուցվածք են համարվում նորարական գործունեության իրականացմանը նպաստող կազմակերպությունները՝ գիտաինովացիոն կենտրոններ, քիզնեսի ինկուբատորներ, տեխնոպարկեր, հիմնադրամներ և մասնագիտացված այլ կազմակերպություններ:

⁶ <http://www.innovcentre.am/arm/innovation/1/1/3.pdf>

⁷ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2624>

⁸ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2624>

Օրինակ՝ ՀՀ Կառավարության կողմից 2008 թվականին ներկայացվեց Գյուլբուրու տեխնոպարկի ծրագիրը՝ տարածքային զարգացման և աշխատատեղերի ստեղծման առավել ընդգրկուն ռազմավարության շրջանակում:

Ինովացիոն գործունեության բարենպաստ միջավայր ստեղծելու համար պետությունը ձևավորում է իր քաղաքականությունը: ՀՀ-ում ինովացիոն գործունեությանը պետական աջակցությունն իրականացվում է Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրով, որը ներառում է միջոցառումների հետևյալ ուղղությունները՝

- ա) ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում,
- բ) ինովացիոն նախագծերի իրականացում,
- գ) կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- դ) խորհրդատվություն,
- ե) տեխնոլոգիաների փոխանցում և առևտրայնացում,
- զ) միջազգային ստանդարտների ներդրում⁹:

Ինովացիայի արդյունքի գնահատման հիմնական չափորոշիչն արտադրողականության բարձրացումն է, որը պայմանավորված է լրացուցիչ աշխատուժով կամ կապիտալով: Դա էլ հանգեցնում է կյանքի կենսամակարդակի բարձրացմանը՝ առանց մասնավոր տրանսֆերտների, սպեկուլյատիվ ներդրումների կամ օտարերկրյա օգնության:

Նման նպատակ հետապնդելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որ 2009թ. ստեղծեց ինովացիոն գործունեության իրականացմանն աջակցող մասնագիտացված պետական կառույց՝ “Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն” պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՆՁԱԿ ՊՈԱԿ): ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգում գործող Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը (ՆՁԱԿ), որի հիմնական նպատակն է տեխնոլոգիաների փոխանցման գործունե մեխանիզմների ձևավորումն ու ներդրումը, գիտատեխնիկական տեղեկատվության և գրադարանային ծառայությունների մատուցումը: Կազմակերպության առաքելությունն է՝ աջակցել մտավոր սեփականության առևտրայնացմանը, գիտատար մշակումների և առաջատար տեխնոլոգիաների շուկայի ձևավորմանը, ինչպես նաև օտարերկրյա և միջազգային համապատասխան ենթակառուցվածքների հետ համագործակցությանը:

⁹ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2624>

Կենտրոնում իրականացվում է “Համագործակցության նախագիծ”, որի նպատակն է աջակցել գիտատեխնիկական, արտադրական և ինովացիոն տարբեր մակարդակի ծրագրերի և նախագծերի, արդյունաբերության տարբեր ճյուղերում կիրառելու ներուժ պարունակող ներդրումային նախագծերի իրականացմանն օժանդակող տեղեկատվական խնդիրների լուծմանը: Կազմակերպությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գիտատեխնիկական տեղեկատվության միջպետական փոխանակումը համակարգող ազգային տեղեկատվական կենտրոն, որի հիմնական ուղղվածությունը համաշխարհային գիտատեխնիկական լրատվահոսքի համատեղ ձևավորումն ու օգտագործումն է¹⁰:

Ինովացիան պահանջում է միասնական, համընդհանուր հենք և փոխհամագործակցություն, բայց ոչ երբեք մեկուսացում: Ինովացիայի զարգացումը կախված է տեղեկատվահաղորդակցման տեխնոլոգիաներից, կրթական համակարգից, աշխատուժի և ֆինանսական շուկաներից, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության համակարգից, պետական ինովացիոն քաղաքականությունից, ապրանքային շուկայում առկա մրցակցությունից և բարեկեցության մակարդակից:

Ինովացիայի խթանման նպատակով վերջին տարիներին ՀՀ-ում պետական աջակցությամբ կազմակերպվում են բազմաթիվ էքսպո ցուցահանդեսներ և տարբեր դրամաշնորհներ, ինչպես նաև դրամաշնորհների ծրագրերին ներգրավվում են միջազգային ֆինանսական կառույցների: Օրինակ՝ Հայաստանում 2014թ. կազմակերպվեց դրամաշնորհ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և “Ձեռնարկությունների ինկուբատոր” հիմնադրամի կողմից՝ Համաշխարհային բանկի “Էլ. հասարակության և մրցունակության համար նորարարության զարգացման” ծրագրի շրջանակում: Մրցույթի նպատակն էր աջակցել տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ /ՏՀՏ/ և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում գործող ընկերություններին՝ մշակելու նոր ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև ներդնելու ՏՀՏ և բարձր տեխնոլոգիաները տարբեր գործընթացների ադապտացման, բարելավման և զարգացման համար¹¹:

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2013-2014թթ. Համաշխարհային մրցունակության զեկույցում /ՄՀՁ/ 144 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 78-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարձրանալով 3 հորիզոնականով (Աղյուսակ 4): Եթե դիտարկենք հարևան երկրներին, ապա

¹⁰ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2624>

¹¹ <http://www.mineconomy.am/arm/59/text.html>

Վրաստանը 72-երորդ տեղում է 4.2 միավորով, Թուրքիան՝ 4.4-4.5 միավորով, Ադրբեջանը՝ 3.9-4.5 միավորով, Իրանը՝ 82 - 4.1 միավորով: Ձեկույցի մեթոդաբանությունը հիմնվում է 12 չափորոշիչների վրա, որոնց միջինացված հանրագումարը տալիս է զեկույցում ընդգրկված յուրաքանչյուր երկրի վարկանիշային ամփոփ ցուցանիշը: Որպես 12-րդ չափորոշիչ վերցվում է ինովացիան, որով Հայաստանը 2013-2014թթ. 148 երկրների շարքում 103-երորդն է 3.0 միավորով (ըստ 1-7 գնահատման սանդղակի, 7-առավելագույն, 1-նվազագույն), իսկ օրինակ՝ հարևան Վրաստանը՝ 126 - 2.7 միավորով, Իրանը՝ 71 - 3.2 միավորով, Թուրքիան՝ 50 - 3.5 միավորով, Ադրբեջանը՝ 51 - 3.5 միավորով¹²:

Ինովացիայի վերաբերյալ Հայաստանի տվյալները բերված են Աղյուսակ 4-ում ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի:

Աղյուսակ 4. Ինովացիայի վերաբերյալ Հայաստանի տվյալները ¹³

		2010-2011 թթ. երկրի դիրքը 139 երկրների շարքում	Միավոր	2011-2012 թթ. երկրի դիրքը 139 երկրների շարքում	Միավոր	2012-2013 թթ. երկրի դիրքը 144 երկրների շարքում	Միավոր	2013-2014 թթ. երկրի դիրքը 144 երկրների շարքում	Միավոր
	Համաշխ. Մրցում. ինդեքս	98		98	3.9	82	4.0	79	4.1
12	ԻՆՈՎԱՑԻԱ	116	2.6	112	2.7	105	2.9	103	3.0
12.01	Ինովացիայի ունակությունը	65	-	61	3.1	62	3.2	77	3.4
12.02	Գիտահետազոտական ինստիտուտների որակը	103	-	107	3.0	111	3.0	106	3.1
12.03	Հետազ. և զարգացման (R&D, ՀՈՒՄ) ծախսերը	127	-	117	2.6	111	2.7	109	2.8
12.04	Համալսարան-արդյուն. հետազոտ. համագործակցություն	124	-	125	2.7	122	2.9	107	3.2
12.05	Ժամանակակից տեխն. արտադրանքի պետ. գնումները	134	-	124	2.8	108	3.1	111	3.0
12.06	Գիտնականների և ինժեներների առկայությունը	93	-	87	3.8	73	4.0	74	4.0
12.07	Պատենտների քանակը	90	-	64	0.6	61	1.4	58	1.7

¹² <http://www.eif.am/arm/news/>

¹³ www.weforum.org/issues/global-competitiveness

Ինովացիոն տեխնոլոգիաներ զարգացնելն իրականում բարդ գործընթաց է, քանի որ պահանջում է ոչ միայն ֆինանսական լուրջ ներդրումներ, այլև ճշգրիտ գիտությունների ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետներ, համապատասխան գիտահետազոտական ինստիտուտներ և արտադրողական մեծ հզորություններ: Առավել բարդ է արդյունավետ ֆինանսավորման խնդիրը: Եթե վերլուծենք վերը ներկայացված աղյուսակը, պարզ է դառնում, որ վերջին երեք տարիների ընթացքում գիտահետազոտական ինստիտուտների որակը գրեթե չի բարելավվել, ինչպես նաև չի ավելացել գիտնականների և ինժեներների առկայությունը, մինչ դեռ այդ ցուցանիշների կողքին համեմատաբար հուսադրող է պատենտների քանակի աճը: Կարելի է ենթադրել, որ վերջինիս աճը պայմանավորված է համալսարանական արդյունաբերության հետազոտական համագործակցության աճի հետ, քանի որ ժամանակակից տեխնոլոգիական արտադրանքի պետական գնումները ևս չի գրանցել աճ: Պետությունը յուրաքանչյուր տարի գիտության պահպանման և զարգացման համար հատկացնում է որոշակի գումար, սակայն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ֆինանսավորման արդյունքում չի բարելավվել ո՛չ գիտահետազոտական ինստիտուտների որակը, ո՛չ էլ ավելացել է գիտնականների քանակը: Ստացվում է, որ ֆինանսավորման ա) կամ ֆինանսավորումը եղել է անարդյունավետ և չի տվել ցանկալի արդյունք, բ) իրականում գիտնականները ունեցել են հաջողություններ, սակայն պատենտները գրանցել են իրենց անունով և դրա մեջ չի երևացել գիտահետազոտական ինստիտուտների մասնակցությունը:

Եթե առաջին տարբերակն է և ֆինանսավորումը չի տևել ցանկալի արդյունք, նշանակում է պետության հատկացված ֆինանսավորումից ֆինանսավորվել են այնպիսի գիտահետազոտական աշխատանքներ, որոնց ֆինանսավորումը չեն արդարացվել կամ ինովացիայի ոլորտում կիրառելի չեն: Կան նաև ֆինանսավորման որոշակի ծրագրեր (դրամաշնորհներ), որոնք ֆինանսավորում են մրցույթային կարգով ընտրված նպատակային ծրագրեր: Սակայն այս դեպքում պետք է մրցույթ անցկացնող հանձնաժողովը լինի բարձր մասնագիտացված և անաչառ, որպեսզի ընտրվեն իրապես հեռանկարային և կիրառական ծրագրեր:

Եթե գործում է երկրորդ տարբերակը, ապա մենք ունենք թերի կամ ոչ լիարժեք գործող պետական գրանցման մարմին՝ Ստավոր սեփականության գործակալություն: Եթե գիտնականը իրականացրել է գիտահետազոտական աշխատանքներ, նշանակում է, որ ամենայն հավանականությամբ նա վարձատրվել է որևէ գիտահետազոտական ինստիտուտին հատկացված միջոցներից, ինչպես նաև օգտվել է տվյալ գիտահետազոտական ինստիտուտի ռեսուրսներից: Ուստի Ստավոր սեփականության գործակալությունը պարտա-

վոր է արտոնագիրը գրանցելու ժամանակ համահեղինակ համարել գիտահետազոտական ինստիտուտին, որը կօգնի գիտահետազոտական ինստիտուտների որակը գնահատել առավել ճշգրիտ: Աղյուսակ 4-ում ներկայացված արդյունքներից թվում է, թե գիտահետազոտական ինստիտուտների որակը վերջին երեք տարում չի բարելավվել, մինչդեռ արտոնագրերի քանակի զգալի աճ է գրանցվել, դա նշանակում է, որ գյուտերի համար արտոնագրերը գրանցվել են միայն հեղինակների անունով:

2013թ հունվարի 26-ին Դիլիջանում մեկնարկեց “Թունո Դիլիջան” ծրագիրը: Թունո Դիլիջան ծրագիրը մեկնարկում է Սիմոնյան Կրթական Հիմնադրամը՝ ՀՀ Կենտրոնական Բանկի աջակցությամբ և “Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն” հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Թունոն փոփոխություններ կբերի. “Ի հայտ կգա նոր սերունդ՝ նոր մտածողությամբ ու ժամանակակից հմտություններով”: Կարևոր է այն հանգամանքը, որ կենտրոնում նոր տեխնոլոգիաների հայալեզու ուսուցում է կազմակերպվում¹⁴:

ՀՀ-ի համար էական խնդիր է գիտությունը համալսարաններին ինտեգրումը: Համալսարանները պետք է դառնան գիտության և ինովացիոն կենտրոններ, կարողանան իրենց ինովացիոն պրպտումների մեջ ներգրավել վեներալին հիմնադրամներին՝ կազմակերպությունների, որոնք պատրաստ են ներդրումներ կատարել նոր գաղափարները կյանքի կոչելու համար:

¹⁴ Թունո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

Պետական ինովացիոն քաղաքականությունը

Բանալի բառեր՝ ինովացիա, ինովացիոն քաղաքականություն, պետական աջակցություն

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական աճը սերտորեն կապված է ինովացիայի ոլորտում ներդրումային գործունեության աշխուժացումից և իրացման մեխանիզմների մշակումից: Տնտեսական աճի ավանդական գործոնների նվազեցման պայմաններում ինովացիաները ներկայանալով նոր կամ բարելավված ապրանքի, ծառայության, գործընթացի կամ կառավարման մեթոդի ձևով, այն շարժիչ ուժն են, որի կարևորությունը շարունակաբար մեծանում է տնտեսական աճի, զբաղվածության մակարդակի և կենսապայմանների բարելաման գործում:

ГОСУДАРСТВЕННАЯ ИННОВАЦИОННАЯ ПОЛИТИКА

Анна АЙВАЗЯН

Ключевые слова: инновация, инновационная политика, государственная поддержка

В Республике Армения экономический рост тесно связан с активизацией инвестиционной деятельности в области инновации и с разработкой механизмов его реализации. В условиях сокращения традиционных факторов экономического роста, инновации, представленные в виде новых или более качественных товаров, услуг, процессов или методов управления, являются той движущей силой, важность которой постоянно увеличивается в вопросе увеличения экономического роста, уровня занятости и улучшения уровня жизни.

STATE INNOVATION POLICY

Anna AYVAZYAN

Key words: innovation, innovation policy, state support

Economic growth is closely connected with activation of investment activity in the field of innovation and development of consuming mechanisms in the Republic of Armenia. Under the conditions of decrease of traditional factors of economic growth, innovations, presented as a method of management of process, service, improved or new product, are considered to be the driving force, the importance of which is continuously increasing in terms of improvement of economic growth, employment level and living standards.